Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, Մայիսի 23-ին. Թիֆլիս. №21

ԿԻԼԻԿԻԱ



ՆԵՐՈՆԵԱՆ ՕՐԵՐ



ԱՅՏԻԿԱՐԱՊԱՀ ՔԱՂԱՔԸ

—Մեր քաղաքում սովորութիւն է, ամեն ...

ամենապարկեշտ աղջիկն անգամ մեղաւոր են ապրիս. ...

ցերեկ որը այդ մեղաւորներից մեկը եմ ...

Ի՞նչ արիք այդ աղջկայինք.



ՀԵՏԵՒԱՆՔ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԷՆՔԻ

—Ասում ես որ ես արդէն ծեր եմ. ինչ անենք. քանի որ ուղի չունեմ օրէնքի համաձայն պէտք է բաժանուենք, այլս չենք կարող միասին ապրել:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄ Է

4 Տարի

# „ԽԱԹԱԲԱԼԱ“

Երգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի

4 Տարի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր գրուող բաժանորդները՝ թերթը ստանում են № 1-ից

Տարեկան գինն է Թիֆլիզում 4 ր. | Դուրս և Արտասահման 5 ր.
Կէս տարուանը » » » » 2 ր. 50 | Կէս տարուանը » » 3 ր.

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, եւ գտնւում է Մօսկովսկայա փ. № 19

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала“:

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Re'daction „Khathabala“.

Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

## ՄԵՆՔ ՈՒ ՍՈՒԼԹԱՆԸ

Երկրորդ ամիսն է բոլորում, որ Ադանան իր շրջականներով, կրակի ու սրի, սովի ու մահտարաժամի բաժին է եղել:

Երկրորդ ամիսն է բոլորում, որ աշխարհը զարհուրեց, այն անասելի վայրագութիւնները լսելով:

Երկրորդ ամիսն է բոլորում, երբ Աբդիւլ-Համիդը մի նուագ եւ, վերջին նուագ՝ փորձ փորձեց Թիւրքական սահմանադրութիւնը հայ արիւնով խեղդելու և սահմանադրասէր հայութիւնը ոչնչացնելով, Ելդզից շառագունած արևելքը, կրակին տուած հայ հայրենիքի ծխով հիանալու:

Անգամ Անգլո-Ամերիկան ձայնակցեց, 100,000 րուբլի նուիրաբերելով կոտորածից ազատուածներին, և մեր կառավարութիւնն էլ 1900 րուբլի ընծայաբերեց:

Մենք լսեցինք այդ ամենը, լսեցինք, բայց մենք ինքներս ինչ արինք:

Ոչինչ. ձեռքի մատը մատին չխփեցինք, մի բոպէ անգամ չմտածեցինք, որ Ադանայի կոտորուողը մեր հարազատ արիւնակիցն է, որ այսօր ադանեցին, վաղը սասունցին, միւս օրը էրզրումցին և մի օր էլ մենք՝ կարող ենք նրանց վիճակին ենթարկուել, ինչպէս ենթարկուեցինք երկու-երեք տարի առաջ:

Ոչինչ չարինք, բայց անմիտ գլոտանքներ սարքեցինք, կարծես ծաղրելով դժբաղդների դժբաղդութիւնը:

Ինչու, որովհետև մեռել է այլևս մեզանում մարդկային նշոյլը, եթէ չասեմ եղբայրական կոչումը:

Հայեր, ինչո՞վ այլևս բացատրենք մեր վերաբերմունքը դէպի արիւնակից և հարազատ եղբայրները:

Միթէ փող չունենք:

Բայց այն տասնեակ հազար րուբլիները, որ ծախսում ենք, այն շռայլ ու շուայտ ծախսերը, որ անում ենք, միթէզրանց փող չենք տալիս:

Մենք սիրտ, գութ չունինք:

Բայց ինչպէս թէ սիրտ չունինք, գութ չունինք. մենք չենք որ անասուններին հովանաւորող ընկերութիւններին անդամ ենք գրուած, տոգորուած ենք կենդանասիրական գաղափարներո՞վ, սայլապանին սպառնում ենք, եթէ նա եզին կամ գոմէշին մտրակում է, ածխավաճառին ոստիկանատուն ուղարկում, եթէ նա աւելորդ բեռ է բարձել իր՝ իշուկին, հաւածախողին տուգանում ենք, եթէ հաւերը գլխիվայր է բռնած:

Ուրեմն ինչն է, որ մեզ ստիպում է մեր իսկ աշխատանքը, մեր հալալ քրտինքից մասն ու բաժին չհանել այն դժբաղդներին, որոնք երեկ և առաջի օր՝ գուցէ աւելի երջանիկ էին, քան թէ մենք:

Հայեր, միթէ իրօք մենք աւելի պոռոտախօս ենք:

Աբդիւլ-Համիդը վերջին ճիգ արեց և վերջին անգամ հայեր կոտորել տուեց. կոտորուեցան նրանք, որոնք պաշտպան էին ընտանեկան պատուի, հայ անուան և ազգային արուտի: Այդ Սուլթանի գործն է, նա է դրա պատասխանատուն աշխարհի և իր խղճի առաջ:

Ներկայիս նրանք, կոտորուողները թողել են մանկամարդ զաւակներ, հարս ու աղջիկներ, ծերունի ծնողներ, որոնք կոտորւում են սովից ու հիւանդութիւնից:

Սրանց մենք ենք կոտորում, մահուան ճանկը գցում:

Ուրեմն Աբդիւլ-Համիդից ինչո՞վ ենք տարբերւում. միթէ մենք էլ սուլթանին գործակից չենք, երբ ոչնչով չենք օգնում քաղցած ծարաւներին, որբ և անտէրներին և արիւնշաղախ հիւանդ հայերին:

Հայտակոնի

## Շահ-Շահի Հրովարտակը

Իմ ամենայարգելի սադրազամ Հաջի Մահամէդ-Ախունդ-Բեալբալայ-Ալի- Ուլ-Միւլք-Մէջլում- Սաֆի- Րահիմ- Բեանդար- Հասան-Մամալիք-Ուլ-Սալթանէ-Նասր-էսդին- Ջուլում-Բեալանթար-Ջիլլի- Ջիբիլ- Ջաղէ- Բարիմ-Բէկ-Օղլի:

—

Գիշեր ցերեկ մտածելով հպատակներիս բարգաւաճութեան համար, ես այլևս չեմ կարող համբերել և նորից սահմանադրական «Կանուն-Էսասի» չշնորհել իմ աչքի լոյս Պարսկաստանի ժողովրդին:

Դրա համար էլ հրամայում եմ այժմ եւեթ, որտեղից որ լինի փող պարտք առնել և փուչ կենդանի Էյնուդ-Դովլէի ձեռքով ու շնորհքով, աւարի ենթարկուած Մէջլիսը վերանորոգել: Եւ որովհետև ես էլ փող չունեմ և դաւերիս էլ խիստ է ընկել՝

Ուստի խնդրելով պատուիրում եմ, ինձ համար էլ ծախսելու փող ճարել, որովհետև մօտ մի տարի է Փէշքէշ չեմ ստացել:

Իմ հաւատարիմ ժողովրդի համար գիշեր ցերեկ աղօթող ու մտածող՝

Մահմէդ-Ալի Շահ՝ Ղաջարի:

17 ռաբախանի 1327

Թեհրան

## ԽԱԹԱԲԱԼԱՆԵՐ

Աշխարս էն օրից ինչ վուր էկել է ու մինչկլի էն օրը՝ իփ կու վիրչանայ հիմնած է խաւթաբալեքի վրէն:

Աշխրքի մէջ էլածը՝ մարթ թէ գազան, սողուն թէ միչատ, ծառ թէ գեղնի մէջի մաղաննիրը. մէկը մէկէլի համա ու ամենքն էլ մէկմէկու համա ջլիզդան խաթաբալէք ին:

Ի՞նչ է խաթաբալա:

Խաթաբալան էն թաւուր մէ բան է, վուր մարթիքս աշխատում ին մէկը

չընգնին, ու վունց գուգիս տառ, տառվ գլխով նընգնում են։

Խաթարայան էն փաթերակն է, առանց վուրի չիս կանայ վունց փըռշտալ, վունց հազալ։

Հին, խիստ հին ժամանակներէն իմացած կուլիք, վուր մարթուս գլխիցը թէ մէ մազ պակասում է, առանց Աստծու կամքի չէ, ծառի վրիցը թէ մէ փաթոլ (տերև) գետնը է նընգնում, ծամի կուզրից թէ մէ ատամ է քամին թռցնում, Աստծու զորութինովն է. ու խաթարայէքն էլ թէ վուր ըլում են, հայրաթառ Աստծու Իրա կամքն է։

Համա խաթարայէք էլ կան ու խաթարայէք էլ։

Մարթս ամէն սահաթ, ամէն նըմուռ աշխատում է վուր խաթարայէքիցը հեռու մնայ. համա, առանց մէր «Խաթաբալի» մեալը կի՝ իրեն համա էլ գաբար է մէր համա էլ։

Խաթարայէք էլ կան, խաթարայէք էլ, ու խաթարայէք թէ վուր խանդիփխան զարար են, ան փաթերակուտը, «Խաթաբալայան» անզարար ու օգտավէտ է։

Էսու համա էլ ան«Խաթաբալա»մեալը, զակօնով ու ադաթով խիստ անհարկի բան է։

Աստուած օրհնիցէ Եզասոս վարթապետին ու տիրացու Մարքարի հոգուն ամէն։

—

Էս բաները ինչի համա էի ասում, ընդուր վուր, իմանաք թէ մենակ դուք չիք, վուր խաթէքի մէջն իք, մենք էլ պակաս խաթարայաներու մէջ չենք նընգնում բանից բէխաբար,

Էն օրը, մէր կանտօրշիկի հէդ մէտի ան՚ոմէն գուս էինք գնում դըս սատմբէն, ճամփին մէ յան, լագաթին փըռշտացի, իժում էլի փռշտացի, փըռշտացի գեթալուսյ ու էն կի չէի իմանում, վուր մի պէտյած թիփիգումը փռշտալը վ ո ս պ ր է շ ա տ ց ա է էլի, ու էն էլ մէր ինալիգենտներու կուզմէն։

Աստուծ էլի կինք տայ մէր դուրերնատորներուն. հուսատա, սրանք վուր չին՝ խալխս մէկմէկու կուտինք։

Փռշտացի գեթալուսյ յաւ լագաթին, վունց վուր գիդիք իմ խասիաթը. ու մէկէլ տրօտուարիցը մէ գիմնազիստ 7—8 կլասի աշկերտ, մէրաշ կցից ըղաւիլ. կանտօրշիկը թէ՝ հայրաթ խիզձը կօսէ գիրիլ է, ախար մայիսին խօ խանդիփխան ով ուփրօ մինձիր ունէ, գիփչում է կըսէ։

Հայրաթառ ասի. գիրած կուլի, չունքի անձրև չի գալի ասի, ու համէլ շուքը զօռում է ասի։

Էս շուքը ամէն տիղ էլ զօռում է, վուրդի գուգիք վիկալէք, ու շուքի զօռութենից գիրածներու կու ռասո գաք։

Թուսրի դէյիշ, սրա մէ վիկալէք միր զաղէթները, տեհէք՝ յաւ անըդեցէք շոքի զօրութենիցը խանդիփխան ինչ թուսուր տաշնուրթուններ են գըրում մէր պուբլիցիստները։

Մտէք մէ Կովկասի Հաուց Բարեգործական Ընկերութենի Ընթանուր ժողովքին, տեհէք ձիր ահկութար աչքով, անըդէք թէ ինչ օյիններ է ըլում, ու վունց է շուքը զօռում, վուր գիշիրներն էլ, իփ վուր ուփրօ հով է, համ նախագահները, համ անթամները շուքեմէն տարուած են ըլում։

Գնացէք, տեհէք Էչմիաձնի ճեմարանի հալը, վարժապետներուն, աշկերտներուն, Տիղակալին ու... ու..., մինձ խիլքի ու շնուրքի տէր Ստէփան Կանայանին։

Էչմիածնումը շուքի սրիւր ուփրօ խիստ է էրում, էսու համա էլ ուփրօ շնուրքը շատ է շանց տալի ու էսու համա էլ նհախ տիղը խիղճ ճեմարանն է զարարի ու խաթարայէքի մէջ նընգնում։

Հիմի ձիզ իմ ասում, կա՞յ էս ահաթիս մեր ասկի սուրփերում մէ էնթուսուր սուրփ, վուր ճեմարանի տօլ չարչարանքներ, տանջանքներ ու փաթերակներ տեսած ու քաշած ըլի։

Չկայ։

Ու էլի զօշաղ, վուր կարում է դըուխը պահի, անումը իրա տիղը ունենայ։

Էն էի ասում, էս գիմնազիստը թէ՝ իպրու հէրը, քու... գուն կօսէ, ինչ պրուս ունիս փռշտալու. իս կօսէ էգզամիննին դվօյկա առանում ու գուն կօսէ փռշտան։

Ա՛յ զուա, ա՛յ գաւի զառալա,

Աստում իս՝ ախպէր յաւ է, յաւ իս մինձանում, Աստուծ օհնէ ժամանակին ու ժուղը, վուր էս թուսուր է քիզ մինձացրի։

Աստում իս՝ մէ ափրուլի տա՛ս, էն էլ իս ասում թէ ձեռնիրդ ռաւյ կուլի։ Աստում իս՝ փի՛ն, տօ համ ջուխտ փըռշտացի, համ էլ դուդատարէքի մէջ նընգնիմ,

Էլի սարը ըլէր, ուրիշ բան էր։

Կիրագի գիշիր, իփ վուր Բարեգործականի ժողովք էի գնում, էլի մէ յագաթին փռշտացի, Գարեգին Ջիւանին ասից, թէ խէր կուլի կօսէ, չունքի յուսինն էլ զօռ է էկի կօսէ. հախ Աստծու Զմչկով Մակարն էլ հասատառից նրա խուսկիրը թէ՝ իփ վուր Իւզիարը էնդի է էրեւում կօսէ, ու իրգնքի վրէն էլ աստղիրը պլպլում են կօսէ, մէ գամ ու դալիմ վուր փռշտաս կօսէ, ասկի համա խիստ օգտակար է կօսէ։

—Աախ ախպէր, իս ասկի համա զարալ իմ վուր գլուխս էլ մատաղ անիմ ասի, էնդդամ կու փռշտամ ասի, մինչկի ինձ էլ պայչեճի չէն նընգըրին ասի Բարեգործականի։

Էլի փռշտացի, էլի փռշտացի ու իփ վուր զալէն տուն մտայ, տեհա վուր Հաուց Պասկանքի Բարեգործական Ընկերութիւնը Եարամուկա ու Խօջի բաղնիսի թուսուր տիղէ դառի։

—Աֆրիկովը կօսէ փիս մարթ է, չունքի էսենց է ու էնենց է. խօսում էին ժողովքին։

Իս Աֆրիկովին չիմ ճանչնում, համա անունս էլ տեհնում իմ, վուր ախմախ է։

Ասած է, մէ վունխտ վուրփին հարցրին թէ՝ ո՞վ աչքը կու հանիս—Ջուզար ասից թէ՝ ով ինձ մինձացրից կօսէ։

Տօ, բաս վուր Աֆրիկովը ախմախ չէր, էնդդամ փուղ կու վիկալնէր ու կու բաժնէր ու իժում էլ պուրինչի ակարբլեմա կուտէր։

—Բարեգործական ընկերութինը ինչ գուգէ։

—Փուղ, նամուսով դաղած։

Իս մարթիք գիդիմ, վուր գուզութին, ուսադակութին, մարթադուզութին, մարթախափութին են անում ու հինգ մանէթ տալով բարեգործական ընկերութենի չլէն են դառնում, ամէն մէ գամ իփ վուր ժողովք է ըլում, տասնուհինգ թումնի խօսում են. էս կուլի ու Աֆրիկովը. մէ գամ թէ վից գամ ուկիլ է մինչկի իրիք հազար թումանի փուղ, ու էս մարթը, վունց գալիս է, վունց խառնում է ժողովքի գուրձերին ու գրան կի ուշունցնիր իք տալի։

Վարժապետնիր ջան, էս խիստ ամութ է,։

Վուր Աֆրիկովը ախմախ է, էսի

ինչ խոսկ. սօ փուղ ունիս, Աստուծ քիզ բախշէ. գուզիս ասկի համա խարջի, միկալ էս փուղով քու ասկութար ձեռով մէ շկօլ բաց արա, մէ լաւ շկօլ, քանց թէ զրգում ես ժողովքին ու խնթրում թէ՝ դուք բաժնեցէք ու ծախսեցէք կօսէ. վա՛, մարդս աշխատիլ գիդենայ ու ծախսիլ չը գիդենա՛յ։

Այ էս գիշերւայ փուշտալուց ինչիր դուս էկաւ։

Համա մազալուն մէնակ էս խօ չէրբա Բագրատ Նուսաարդովի ու Սամսոն Արութինովի խատրին, ես իմ փուր իշում իմ Աստուծ գիդենայ ամանչում իմ, ամանչում իմ ու ինքս ինձ հարցնում. սօ սրանցմէն մէկը գօխատուրէ, մէկէլն էլ ատուակատ, աշխքբին գիդ ու զարման, խորութ ու զակօննիր սրանք ին սովրեցնում, բաս ջէհելնիրը եազուղ իրենք չին սովրի ու իրենց ասկութար զուրծիրը, հաշիվնիրը Գասկասեցի ժողովքումն ին անդզում։

Հայրաթ սրանք էլ ին շուքէմէն բանի. էս մէկ, ու վրա էրկուսն էլ էն վուր, ես կիբէքի վրէն իմ վուր բանցրանում էի, էլի փուշտալի ու թէկի փուշտալի, հայրաթսա խաթէք էլ կուլէր։

Մախլուն։

Գասպար Կալասուզենց

---

## ԳԻՒՂԱՑՈՒ «ՀԱՅՐՄԵՐԸ»

Հայր մեր, որ երկինս ես և երկրի,
Չեսար երփ մեզիկ թողես ուարի...
Սուրբ եղիցի անունն քո ուրարի,
Եկեսցէ արքայութիւնդ սաղ տարի...
Եղիցին կամք քո որպէս երկինս և երկրի
Մեր զառ վատակ, հալալ մի էնեք օտարի...
Հաց մեր հանապազ խասցու անճարի
Օձախներս ծուխը մի թողներ մարի...
Թող մեզ զպարտինս, որ նման է մենձ սարի
Որպէս և մենք թողնենք պարտքերս
«բազարի»
Մի տար մեզ փորձանք ու ձեռք չարի,
Արքայութեանդ լուսը ծագէ վրը խուրի
Զօրութիւն, փառք, յաւիտեանս ամէն,
Մեր տուն ու բալէք սաղ պախա ամէն...

Շաւէլ-Արաբ

---

## ԱՊԱԳԱՅ ԴՈՒՄԱՅՈՒՄ

(Օ. Դրիմով-ից)

—Լսեցէք, դուք երեկ էլի չէիք եկել։

—Պարոն նախագահ, Աստուած վկայ ատամներս ցաւում էին։ Չը կարողացայ գալ։ Ամբողջ գիշեր ցաւում էին։

—Ես ձեզ արդէն ասել եմ և դարձեալ կրկնում եմ բոլոր աջակողմեան պատգամաւորներին,—ատամը յարգելի պատճառ չէ. ոչ ատամները և ոչ փորը։

—Փորս չէր ցաւում, այլ միմիայն ատամներս։

—Միեւնոյն է։ Երեկ հերթական հարցը այս էր—«Ժողովը բացուած է» պէտք է ասել, թէ՞ «նիստը բացուած է»։ Սախալեցանք ձեր պատճառով յետաձգել։

—Իմ պատճառով։ Ինչու իմ պատճառով։ Երեկ Պուրիշկեւիչն էլ չէր եկել, Կրուպենսկին նոյնպէս։ Բայց բոլորը բարդում են ինձ վրայ։

—Պուրիշկեւիչ Վլադիմիր, ձեզ են կանչում։ Ուր է Պուրիշկեւիչ Վլադիմիրը։ Ինչու դուք հացէ գնդակներ էք նետում։ Եկէք այստեղ։ Ուղիղ կանգնեցէք։ Ինչու երեկ չկայիք։

—Հ՞ը, դէ խօսեցէք, երբ նախագահը ձեզ բան է հարցնում։

—Երէկ... երէկ... երէկ ես չը կարողացայ գալ։

—Ինչու։ Քո՞ էլ ատամներդ։

—Ոչ։ Չը կարողացայ։

—Ես ձեզ հարցնում եմ ինչու։

—Ամօթ է ասելը։

—Ամօթ է։ Բայց դուք չէք ամաչում։ Ասացէք։

—Թող Միլիւկովը ականջ չանի. թէ չէ նա կը սկսի ծիծաղել։

—Միլիւկով Պաւել, բռնեցէք մի կողմ։ Դէհ, խօսեցէք այժմ։

—Երէկ, ես, պարոն նախագահ, չը կարողացայ ներկայ լինել ժողովին, որովհետև ինձ դուրս արին։

—Ձեզ ո՞վ դուրս արաւ։

—Պարոն սաւիկամասպետը դուրս արաւ։ Ասաց երկու օր տանը կը նստես։

—Ի՞նչ բանի համար։

—Ամաչում եմ ասել։

—Պարոն սաւիկամասպետ, դո՞ւք դուրս արիք Պուրիշկեւիչին։

—Այո, ես։

—Ի՞նչ բանի համար։

—Անկարգութեան համար։ Անկիւններում անկարգութիւններ էր անում,

—Ա՛, գնա բանիդ. միւս անգամ անկարգութիւն չանես.

—Կրուպենսկի, իսկ դուք ինչու չը..., ուր է Կրուպենսկին։ Ես հարցնում եմ, ինչու չը կայ Կրուպենսկին։ Ո՞վ է օրապահը։

—Օրապահը Գուչկովն է։

—Ես այստեղ եմ, պարոն նախագահ։

—Լսեցէք, Գուչկով Ալէքսանդր, ինչու Կրուպենսկին չկայ։

—Կրուպենսկին յիրաւի չկայ, պարոն ուսուց... Նախագահ։ Նա ասաց, որ ընդհանրապէս էլ գալու չէ։

—Բոլորովին գալու չէ՞։

—Բոլորովին։

—Բայց ինչու, է՛։

—Նա ասում է, պարոն նախագահ, որ իրան հերիք չէ անում օրական տաս ռուբլի։ Իմ շրջանի մարդիկ, ասում է, չեն կարող օրական տաս ռուբլիով ապրել։

—Հայրը կարող է նրան տալ։

—Հայրը չի ուզում։

—Տարօրինակ բան։ Եթէ նա չի յաճախի դաս... այսինքն նիստերին, այն ժամանակ ստիպուած կը լինինք, նրան երկրորդ տարին թողնելու։ Ո՞վ է այստեղ աղմուկ հանում։

—Հեսսէնը շարունակ հրում է։

—Հեսսէն Վլադիմիր, ինչու էք հրում Սարուալէին։

—Ես նրան բոլորովին չեմ հրում։

—Պարոն նախագահ, նա ամեն ժամանակ ինձ հրում է ձախակողմ։

—Ես ձեզ խոնարհաբար խնդրում եմ. Հեսսէն, Պետր Սարուալէին հանգիստ թողնէք։ Ի՞նչ էք շարունակ նրան նեղացնում։

—Աստուած վկայ, ես նրան չեմ հրել։ Ես միայն խորհուրդ էի տալիս։

—Նա կարիք չունի ձեր խորհուրդներին։ Սարուալէ Պետր, լաւ կանէք աւելի աջ նստէք, այն ժամանակ նա չի հրի ձեզ ձախակողմ, աւելի աջ... էլի... էլի... լաւ, բաւական է, այդ ո՞ւր․․

—Ես արդէն նստած եմ։

—Դուք էլ նստեցէք Ալէքսինսկի։

—Շնորհակալ եմ, ես արդէն նստած էի։

—Խնդրեմ առանց բառախաղերի։

—Այդ ի՞նչ էք անում դուք այնտեղ, Մակլակով։ Ձէ՞ որ ես բոլորը տեսնում եմ։ Ինչու էք արտագրում։

—Ես չեմ արտագրում։

—Դուք արտագրում էք Ռոդիչեւից.

—Ես միայն խորհրդակցում էի նրա հետ։

—Յետոյ էլ կարող էք։

—Պարոն նախագահ։

—Ի՞նչ է։

—Թոյլ տւէք դուրս գնամ։

—Տէր Աստուած, նոր չվերջացաւ մեծ դասամիջոցը և արդէն դուրս գնա՛լ։

Մեծ կարիք ունեմ։

—Ուրիշ անգամ։

—Խիստ մեծ կարիք ունեմ։

—Դէ գնացէք։ Ո՞վ է այնտեղ փորձնական գնդակիկ շպրտում մինիստրական լօժան, հ՞ը։

—Գուչկովն է։

—Դեռ օրապահ էլ է։ Ի՞նչպէս չէք ամաչում։

Ինչու միեւնոյն բանը անցեալ տարի կարելի էր։

—Այնպէս։ Իսկ այս տարի չի կարելի։

—Տարօրինակ է։

—Այդ յանդուգն տոնի համար, այսօր ես ձեզ առանց ճաշի կը թողնեմ, կամ կը կարգեմ բիւջէտային յանձնաժողովի անդամ։

—Ներողութիւն, էլ չեմ անի։

—Դէ էլ չլսեմ։ Բոլորը ներկա՞յ են։ Մէկ, երկու, երեք... ուր է կօմս Բոբրինսկին։

—Այստեղ եմ։

—Ա՛հ, այդ դո՞ւք էք. թողէք լրագիր կարդալը. հիմա դրա ժամանակը չէ։

—«Ռօսսիա» է սա։

—Դէ, ուրեմն կարելի է։ Պարոններ, նիս-

որ բացւած է։ Օրակարգի հերթական հարցն է.—Ի՞նչպէս պէտք է ասել՝ «Նիստը բացւած է», թէ «ժողովը բացւած է»։

—Խնդրեմ ձայն ունէք։

—Խօսքը Վլադիմիր Պուրիշկևիչինն է

—Պարոնայք ժողովրդական Ներկայացուցիչներ։

Երբ լէհացի և ջհուդ այլազգիների անզգամ խմբերը ներս խուժեցին........

Թարգ. Ասեղ Մախաթովիչ Շամփուրով

## Ա՛Յ, ԹԷ ՈՒՑ ԴԱՌԱՑ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Հենց գիդայի թէ, բանաստեղծ ըլնել,
Խելք ու քեամալի, հունարի բան ա,
Մախլուխի միջին մենձ անուն հանել,
Ուսումով գլխի; քեալլայի բան ա։

Բայեր գնացի մի մանտօ առայ,
Նեղ շալւար սերթուկ, ինքն էլ անփարայ,
Դեղնադոյն չարմա, չէշմակ ու տրօստ,
Ջարգւած ցիլինդը, կրախմալու փօստ։

Մազերս էլ երկար, խուճուճ շինեցի,
Բեղերս կանտով, մի միրուք էծի,
Ցիգար ու տրօստ, երբ թամամ եղաւ,
Էլ փալանդուզը, բանաստեղծ դառաւ։

Ու գալամն առած, ահա գրում եմ,
«Սեան Եախշու» նման, ծուռ գիրքով նստած,
Քեալլաշովի պէս, երեւակայում եմ,
Ամպերի միջին, աթոռ դրած։

Պարոն Աւետիք Իսահակեանից,
Նուշ, փուշ, վարդ, պաշեր, բոլ անգիր արած՝
Ու արտասունքն էլ Աճարանովից,
Ծոր ծոր թափում եմ, կծով փոխ առած։

Թումանովի պէս, գլխս զոռում եմ,
Ամէն սորթ գրում, մենձ շնորհք ցոյց տամ,
Վախտ վախտ էլ խալխից, բոլ գողանում եմ,
Մեր Աւաքելով Համփօյի նման։

Էյ դու Ծատուրով, շատ չպարծենաս
Քու քաղցած փորով. ես քեզնից զօռ եմ,
Կամ քնած վախտս, անթաստամ երազ՝
Օհանէսից էլ տեսնելու քօռ եմ։

Պոզպատ ու գնջիլ, գնդան ու կարիչ,
«Ջլոտ բազուկներ» թիակ, խոփ գրիչ,
Էս բաներից էլ, մի բոլ առել եմ,
Մեր Կուրղինեանցի երկաթի դուքնից։

Ախ, օֆ, հէյ, աւաղ, արև ու աստղեր,
Կապտագոյն թշեր, հէյ կարմիր աչքեր,
Վարդ ու սիրական, սոխակ, գիշերներ,
Բաց մառմառ զօշեր, նուռ, շամամ ծծեր՝

Էս բաներից էլ, հօ մեր բուջէքում,
Կարելի ա որ թիակով կիտել,
Ու էս խիստ էժան, ատատ տարիքում,
Դժւար ա կասենք բանաստեղծ չինել։

Փալանդուզ Մկօ

## ԱՊԱՆ ՀԷՅ

—Ապան, հէ՛յ.
—Հէ՛յ.
—Այանը աղա՛յ ա, պիրալ.
—Բաս Աստուծ տւալ ա, պիրու ծուչ։

—

—Ապան, հէ՛յ.
—Հէ՛յ.
—Հերինջը մորթա՛լընք.
—Բաս այանը աղայ ա պիրալ, մորթըք ծուչ։

—

—Ապան, հէ՛յ.
—Հ՛յ.
—Հերինջը մաշկալընք.
—Բաս մորթա՛լըք մա՛շկըք ծուչ։

—

—Ապան հէ՛յ.
—Հէ՛յ.
—Հերինջին կաշին չոնը տարա՛լ ա.
—Բաս մնղար տա՛ն ա, չոնը կաշին տանի ծուչ։

—

—Ապան, հէ՛յ.
—Հէ՛յ.
—Խոխան մեռալ ա.
—Բաս Աստուծ տւալ ա, տանի ծուչ։

—

—Ապան հէ՛յ.
—Հէ՛յ.
—Այանը լաց ա ինում.
—Բաս խոխան մեռալ ա, լացի ուչ։

—

—Ապան հէյ.
—Հէյ.
—Բաս խէ՛ չես կեամ տուն.
—Աղա բա հ՞ընց կեամ տուն. խոխան մեռած, հերինջը մորթած, կաշին չոնը տարած, տուն կեամ հ՞ընչ անեմ։

Գըլլան Ցակոբ

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ՀՈՍՀՈՍԱՊՈԼԻՑ (Ստամբօլ)

18 մայիսի

Գասպար ջան.

Ստացայ նամակդ, շնորհակալ եմ բարեմաղթութեանդ համար, բայց ների՛ր որ չեմ կարող այս րոպէիս համբոյր կատարել—գրելու Ֆրանսիա և Անգլիա ու անդրական կառավարութիւնների հետ բացատրել և բանակցել հայկական հարցերի առթիւ։

Իսկապէս ես զէմ չեմ ժամանակակից Ֆրանսիայի քաղաքական դրութեան, միաժամանակ շատ էլ սիրում եմ մեր ազնիւ բարեկամ Էդւարդ V-ի կառավարութեան վարչական ձեւ. թէև Եգիպտոսը՝ որտեղ ոչ մի հասարակապետութիւն և ոչ էլ պառլամէնտ կայ, պակաս ազատ երկիր

## ՖԵԼԻԷՏՕՆ

*Թոլային խորունկ թորպայէն, Թատառովին Համբի Պառոնին փաղըռած հինկէկ տէվթէրէն փոռէվոտ արից՝ Պոնժուռին Մ՚եկրոնը։*

II

Ազլի սարկաւագը կիրը կառնէ Աստւածին Արութինին ծեռքէն, հոգշման կերթա Թիթիգին Սափելին տունը, ներս մտած չմտած, պարէվ կուտա Օլինքային, ու կհարցունէ, վուտեճ ս է պապատ։

Պապատ ալ մամաս ալ տունը չին կասէ։

Վուտեճ ին կասէ։

Կնացին չեր։

Ձեր ի՞նչ բերծ ունին կասէ ազլի սարկավագը, կով, օչխար նայելու։

Չէ կասէ ազլի Օլինքան, կնացին ցէթերին, կատատմա բաղելու։

Ազլի սարկավագը կիրը կուտա Օլինքային. Օլինքան կկարթա խաէ, արուն. կօլոխը կըզարնէ, ու ռուֆը կպացէ, մէկ սէմթէն ուրախ կըլա վոր իրեն ուզեցող կա, անալ սրփ Կէվորքին լուսարարը, զէրէ էստուն հինկ խըտանէլէզ ու վարթիվոր տեսիլ էր, մէկ սէմթէն ալ սիրտը կնլէ, վոր փոխալաժէնին նավամօտնի չէ, հինուր ատէթով է, կեղի համան աս ճուղապը կկրէ, հանա կիրին սիւրէթը։

1

Արութին ա, ես պիտ ըլամ սայիախըլըտ, ինծիմէն պաշխա սայիախըլը ունենալու խատիր չըլաս, էկէր ալայ մալայ խէվ ալ ըլամ նը, ես սէբուէն տարու, հալէ ինկած խորթլախ ալ ըլամ նը, աչքըդ պաց, կէնէ ես եմ սայիախըլըտ։

2

Մամայիս պիտ սիրիս, խատիր չըլաս տունէտ փախ տալու, էկէր պիթուն օրը իրէն տտտվանքով պօշ կալաճիներով կօլոխըտ ուռեցնելու ըլա պիլէ, ամա ես մայիտ խէվ էրէսը չուզեմ տեսնելու, կօլոխը կկոտրիմ տայեախով, էկէր ազպարս մանելու ըլաս պիլէ, անկաճիս օղ թօ ըլաս

3

Օտարին սայիախըլըյին, ես հարսին, ես քուրոջը, ես հոռնիշնանեռուն ծուռ միթքով նայելու խատիր չըլաս, նայել ուզենաս նը, ես հոս եմ, ամա, ես վոըրին հետ ուզենամ՝ անոր հետ պիտ քալիմ, ես իմիս կուլխուս վրան քանթրօլ չուզիմ, ես վօնի պիտ ըլամ Լիդային պէմնակ։

4

Քափուսթայով միս, ես պումպար էփիմ նը, պիտ թատաքանով իլինք ըլա պիլէ, տատովաս նը, խալկինը կօլոխըտ կանցունում, խէվ Ախտապէթին պէմնակ։

5

Էրիկիս նը, ապեագնըսարթ պիտ կիտնաս, էկէր չուզես տունիտ մէջը քնքուշէնթ ունենալու, շընարիվան զանցան կիտիս խօմ։

չէ—քանց թէ անգամ անդրատլանդեան Մեծ Հասարակապետութիւնը։

Գասպար ջան, իմացած կըլինես անպատճառ, թէ ինչ հրաշալիք է Եգիպտոսը. ասում են տարեկան հինգ անգամ սերմերը են ցանում, ոչ երկիր, ոչ աշխարհ, մի տես թէ հաւի կուտը ինչ էժան կըլի. եթէ Եգիպտոսում սերմնդրացանութեամբ և մասամբ էլ հաւաբուծութեամբ պարապեն, աշխարհս լի ու լի բաւականութիւն կըտան. հեշտ բան է ասել, հինգ անգամ տարեկան ցանես. մեզանում խակի հինգ տարին մի անգամ օրինաւոր բերք չէ լինում։

Հա այն էի ասում՝ ինչի չեմ կարող գընալ Ֆրանսիա. նախ և առաջ այն պատճառով, որ տեղական կերակուրները չեմ կարող ուտել. խակ Ֆրանսիայում ասում են գորտ, ջրջոյ, խլեզ, կիպարչխելա (խեցգետին) էնպէս են ուտում, ինչպէս մենք ցոցխալ. խակ ես բացի կովկասեան, կամ Թուրքական սեղանը, ուրիշ տեսակ բան չեմ կարող մարսել. առանց այն էլ Պօլսի թունդ հակայեղափոխութեան միջոցին՝ ռուսական կոնսուլխանում եղած ժամանակս՝ կաշառ ու բորշը ստամոքս խանգարեցին. ես ուզեցի անգամ այդ հարցը տեղական պառլամէնտի նիւթ դարձնել և բաւարարութիւն պահանջել օսմանեան կառավարութիւնից իմ քաշած վնասների համար։ Արդէն այդ մասին խօսել եմ պառլամէնտի նախագահ Աճէմ Թիգայի և մեր պատգամաւոր Գրիգոր Զոհրաբի հետ, որ ականաւոր հռետոր է։ Ցոյց կայ գործը տանեմ, յետոյ տես թէ փողը որ ստանամ, ինչ քէֆ պիտի քաշել տամ ձեզ։

Գլխաւոր պատճառը դա է, երկրորդն էլ այն՝ որ պարոն Կլէմանսօին ես չեմ հաւանում. ինչպէս տարօրինակ մարդ է այդ Կլէմանսօն, ասում են, որ նա յաղթում է սօցիալիստներին—և յանկարծ մինիստր պրեզիդենտ. ինչ անհեթութիւն, միթէ կարող է մի սօցիալիստ իշխանութիւն բանեցնել և անգամ կոալիցիակից լինել մահուան պատժի, ինչպէս նա այդ արեց քանիցս անգամ. այլես չեմ ասում այն բաների մասին, որ ուղղակի ապշեցնում է, թէ նա այդպիսի թունդ հակառակորդ եղաւ պարիզեան պօստատար ծառայողների գործադուլին, Հաւրի ածխահանքի բանւորների պահանջներին և Մարսէլի նաւաստիներին։

Գրիր խնդրեմ, մեզանում հիմի ինչպէս է՝ գործադուլ-մործադուլ, դարաստմկա-մարաստմկա խօ չկայ։

Ա՜խ, էա ինչ էր մօզընեցինք և մեր տունը, մնց մեր խակ ձեռքերով քանդեցինք։

Ֆրանսիա չգնալուս պատճառը, մասամբ էլ տեղական կանանց վարքն է. իմացած կլինես, թէ բարքերը ինչպէս են ապականուած Պարիզում։

Ինչպէս ցաւալի է, որ լուսաւորութեան կեդրոնը՝ ապականութեան որրան էլ է դառնում։

Էս ինչիցն է, Գասպար ջան, գիտե՞ս, ես ինքս ինձ շատ անգամ հարց եմ տալ և տեսել, թէ ինչպէս մեզանում, մեր Կովկասում, Թիֆլիզում անգամ, այն մարդիկը, որոնք Եւրոպա շատ են շրջել, ապրել, ուսել, աւելի մասների արանքից են նայում վարքին, քանց թէ մենք հին մարդիկս։

Յիշիր բոլոր այն ծանօթներին, որոնք կենակցում են, կամ իրենց մօտիկ ազգականների, կամ ընկերների կանանց հետ։

Փառք Աստուծոյ կինը, մեզմէ, մեզմէ առաջի Արարչի և քո, հիմի համարեա տասը մի շայի է դառել. էլ ինչն. բարեկամի հետ պտտել, ընկերոջ կինը փախցնել, ֆլիրտ կամ դրամա ու կոմէդիա սարքել։

Ամենագլխաւոր պատճառը Ֆրանսիա չըգնալուս աւելի էն է, որ ջիբումս կոպէկ փող չկայ, իսկ Պարիզ գնալու համար՝ հարկաւոր է առնուազն ամսական, նու, քիչ քիչ մի հազար ֆրանկ։

Մեր կուսակցութիւնն էլ ոչ ոքի փող չէ տալիս, ինչպէս ուրիշ կուսակցութիւնները, դա էլ խայտառակութիւն է, ինչպէս դու պէտք է այս հարցը կոնգրեսի նիւթ դարձնես, ինչով ենք մենք պակաս, կամ ինչպէս կարելի է կուսակցութեան շէֆ լինել և արտասահմանում եղած ժամանակ գոնէ, նըպաստ կամ թոշակ չստանալ, կուսակցութեան համար՝ քանի՞ դրօշ արժէ մի քանի հազար ֆրանկը։

Այս Ֆրանսիայի վերաբերեալ. գանք հիմա Անգլիային։ Անգլիացուն ես սիրում եմ, որպէս խելօք ազգի, որ վաճառականութիւնը բարձր է դասում, քանց թէ բոլոր ուրիշ գիտութիւնները։

Ա՜յ, ոչ թէ մենք էլ նրանցից խելք սովորէինք, ինչ լաւ կը լինէ՜ր։

Յամենայն դէպս, Անգլիա գնալը թէև կարելի էր. մուֆթա նաւով, Մանթաշովի ի հարկէ. բայց և սիրտս չի տալիս. նախ որովհետև ես Էդւարդ V-դի հետ ծանօթ չեմ, յետոյ, որովհետև Բալֆուրին շատ էլ չեմ հաւանում. ասում են թէ մարդիկն էլ սարսափելի սառնարիւն են, ուրեմն ինչ կայ մեր մէջ ընդհանուր։

Գալով այն ջերմ ցանկութիւններին, որ անգլիացիները իբր տածում են դէպի մեզ՝ հայերս, ես շատ էլ հաւատացողներից չեմ։

Մի վաճառական որչափ անձնապէս և բարեկամդ լինի, յամենայն դէպս առևտրի ժամանակ կաշխատի, իր օգուտը, շահը ի նկատի ունենալ։

Վերցրու հէնց բոլոր մեր վաճառականներին, արա մի անգամ նոյնիսկ Միխակ Սուգանանճեանից գաշնամուր գնիր, նա պատի գինն էլ վերան կը դնի և կը հաւատացնի, որ ինքը առած գնիցը պակաս է քեզ տալիս։

Նոյնը և մեր Գալուստ—Գուտտեմբերգը, որ վաճառականութեան մէջ նոր գիւտեր է անում, եթէ ուզում ես մի գիրք գնել և նրանց

---

6

Իրիկվան կանուխ պիտ քաս տուն, քըւալ, ես Փալէսմօ, ես պախչա տեղ միւսաֆիր էլթալու խատիր չըլաս, կինի, ախր խմելու չես, էկէր խմել ուզենաս նը, ես հազեմ, տուն կուքաս պարապար կխմենք Բիրիշճիի ֆասօնով։

7

Ինչ ալ վառօրկիս, ինծի պիտ պերիս, խատիր չըլաս քայիկ տուը խարճելու. էկէր յիշելիքի, ես ախքատի սասկ պէտք ըլանը, ես կուտամ քեզի քանի քայիկ ալ ըլանը, ցավըս փորը։

8

Մամա պապայէտ, սոյ ասիէտ վագ պիտ քաս, անոնց ասխաթէն պիլէ անցնելու չես. քուրոնջրա փլաթի, ես շեսի կնելու չես. ամա, մամա, քուրս իմիս քովըս պիտ ապրին. սապախատան տեղէտ էլլածովըտ, մամայիս ծեռքը պիտ պաքնիս. մամաս ծերանանը յնրուսաղըմ պիտ խըրկիս, քուրոչս ալ պիտ կարքիս, սասկ այեամիշ պիտ չանիս, չէնէ տունէս փախ կուտամ քեզի։

9

Տուն ինծի խատիր չըլաս փոխքաղաթ անելու հին առէթով, ես քեզի պիտ փոխքաղաթ անիմ. էկէր նեավըս պրնից իսէ, վառքիս տակը կարդրիմ։ :

10

Ինչ ալ անիմ սուս պիտ ըլաս, տունըս մըտնող էլլողին փոխնիմաթ պիտ անիս, գիշերը ուշ ատեն տուն քալու ըլամ նը, ծան հանելու չես, սա բուկուս քարծըս չէ, թէ վոր քավալէքը ինծի տուն ճամփիլ է։ Էկէր մեռնելու ըլամ նը, մինչ Քիստոսին քալը խատիր չըլաս կարքելու, ամեն սապահատն պիտ քաս ըերեզմաննոց՝ վրաս դուք պիտ անիս, էկէր ալայ փոխալածէնիս կատարելու խօսք կուտաս, ես հազիր իմ, միլլաթի փօսիմ, ալի Թարօս կուքաս, ակէր Մուէս պայլին ծեռքով կկարքվինք. ես սա տուսացի ասնդալախ ակէր Կէվորք պայի ծեռքով կարքվել չուզեմ։

Օլինքս Սամելօմէս Թիթիզամս։

Աստուածինին Արութինին հէքեան։

Աղլի Սիմօն սարկավագը կիրը կառնէ կուքա Աստուածինին Արութինին կուտա։ Աստուածինին Արութինը կիրը կկարթա նը ստուֆը կպացվի, տրունը կօլոխը կզարնէ, կաշլայէ քիւֆուրը, ալայ կարքվող խէվերուն քիւֆուր տալէն էտէվ, կպանս ժամին տուսը, կերթա ալի Գէվորքին տիմացը կչոքի, աղօթք կանէ, ալի Գէվորքին տիմացը խօսք կուտա, վոր մէմալ կարքվելու վրան միթթ չանէ, հէմ անպէս ալ լէվէնտ մեռավ, Աստված օղորմի հոգուն, ամա Թիթիզին Օլինքան ինչ էղավ՝ չիտիմ, ալ ալըմ Թանկայքին համար ֆալ կպանս՝ վոր քործ արած իրէնք ասիս ըլս մըթընծեծ չուտէ։

Պօնժուռի Մելքոն

ეროვნული ბიბლიოთეკა

էլ փող ես տալիս, կէսի կէս գինն է տալիս։ Չեմ ասում մեր միւս վաճառականների մասին, որոնք իրաւունք էլ չունին մեր Միխակի ու Գուտանմբեքովի անուններին հետ իրենց անունը դնելու, որովհետեւ էլի եմ ասում, ամենքից լաւերը դրանք են։

Այսպէս ուրեմն. յայտնում եմ, որ Անգլիա նոյնպէս չեմ կարող գնալ, որովհետեւ մի ուրիշ պատճառ էլ կայ. ասում են՝ ամիսներով Լոնդոնում արեւ չէ ծագում, ուրեմն ես էնտեղ խոյուրդ պիտի դառնամ ինչ է, որ հայ ազգի «խաժերու» անարեւ ազգեմ. ոչ, ոչ, ներողութիւն կանէք, ես արեւ Հայաստանի հետ կիր չէ, անգամ ամբողջ աշխարհի հետ չեմ փոխիլ։

Մի ուրիշ պատճառ էլ պատմեմ. իմացած կըլնեք, որ II եւ III խմբերի մեր դերասանուհիները, համարեա բոլորն էլ փախան եւ այս պատճառով ստիպուած ենք լինում հազար ու մի չարչարանքներով ներկայացումներ տալ. Գասպար ջան, չընեղանես ու չը զարմանաս գէթացայ, մենք աղամարդիկս հիմի ստիպուած ենք եւ կանանց դերերում դուրս գալ Պօլսի թատրոններում։

Անցեալ օրը Օհանեանը գրանդ—դամի դեր ունէր, Զարիֆեանը խաղում էր սիրահարուած չարաճճի օրիորդի դերը, իսկ ես էլ պառաւ տատի. այժմս մենք ուղղակի Ցրիզօլօներ ենք դառել։

Իսկ ես խօ չեմ կարող ազգի համար խմբին զուլաճանել. ցաւած է դեռ գլուխը, յետոյ փորն ու ոտները. այս տեսակ իմացած կը լինես անպատճառ։

Ցտեսութիւն

Արշ. Յարութիւնեան (կնքծ)

Ցախլու համար արտագրեց՝

Պօլէտիկոս

* *
*

(Նւէր ուսուցիչ-ուհիներին)

Մեր վարժապետը.
Պարոն Աչէմը
Հենց որ դասատուն մտնէր՝
Սիրալիր տեսքով
Անուշիկ խօսքով
Ամենիս կը բարեւ էր.

«Աշակերտներս,
Անուշիկներս,
Պարապեցէք սուս ու փուս»։
Այսպես ամեն օր,
Ճտապ ու մոլոր
Դաս լըսուած. կերպար դուրս...

*

Դիւղի վարժուհին,
Օրիորդ Զարուհին
Երբ որ դասատուն մտնէր,
Քնքուշիկ ձայնով,
Ամենիս հերթով
Մեկիկ-մեկիկ կը գգուէր...

«Հայրուպիկներս,
Խոյտոպիկներս,
Դուք կրկնեցէք հին դասը»։
Իսկ ուզածը մեր,
Ջա՛ն, ջա՛ն, հենց այդ էր.
Պարապ եինք ողջ դասը...

*

Ընկեր Մարգարին,
Ամենից չարին,
Մեկ օր տեսանք խնդալիս.
—«Վա՜յ, վա՜յ, տղերք ջան,
Պարոնն օրիորդին,
Օրիորդը նրան,
Ուսուցչանոցում
Մեկ մեկու են դաս տալիս։

Ս. Բագէն

## ԲԱԼԱԽԱՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒՄ

I

—Գրիգո՛ր, ուղիղն ասած, ես երեկուայ զատախօսից իսկի բան չհասկացայ, անտարանդը հենց գիտենաս հայ չըլէր, երկու խօսք իրար յետեւից չէր կարողանում խօսել, աստուծ չարչարելու։

Գրիգորը.—Բա դէհ ինքը ասեց, որ շատ մարեր չիկարելի մեր լեզուով արտայայտել...

—Հա՛... Լաւ, թող էն վախտը, մեզ առաջուց իմաց տար, որ կարողանայինք իրա լեզուն սովորել. թէ չէ, ինչ դառաւ, համ ժամանակ կորցրինք, բան չհասկացանք, համ էլ խեղճին չարչարեցինք, բա դա զատախօսութիւն դառաւ։

II

Վերահսկիչը.—Աղա, երէկի խմ գործի չէիր եկել։

Ծառայողը.—Լուացք ունէինք տանը...

Վերահսկիչը.—Բա քեզ ինչ, լուացքը խօմ դու չէիր անում։

Ծառայողը.—Շատ էլ որ ես չեմ անում, բա իմ շորերը լուանալ հարկաւոր չէ՞...

Վերահսկիչը.—Այ քեզ բան. խմ, հէնց էդ մի ձեռաշորդ է։

Ծառայողը.—Բա ինչ, էնքան առճիկ էք տալիս, որ մարդ երկու ձեռք շոր ունենայ, որ մէկը լուանալիս միւսը հագնի։

III

Բալասան, բա դու ասում էիր որ ուստալեայուշշին քեզ վերցնել պտի, բա ինչ եղաւ։

Բալասանը.—Ի՞նչ պտէմ ըլէր, Գիւքիջանը չի վէկալնում.

Գիւքին.—Հէ՞ր...

Բալասանը.—Ի՞նչ իմանամ.

Գիւքին.—Բա չէ որ խօսք էր տուել.

Բալասանը.—Շատ էլ որ խօսք էր տուել, ասում ա, խօսքը ես չեմ տուել... յետ եմ վերցնում իմ խօսքը.

Գիւքին.—Հա՛. ես էլ զարմացայ, հէր չէ վէկալնում։

Մոն-Սի

## «ՔՐՏԱՄԲ ԵՐԵՍԱՑ ՔՈՑ ԿԵՐԻՑԵՍ ԶՀԱՑ ՔՈ»

Մեռելոցի օրը գերեզմանատանն առաջին բազմութիւն կար։ Չնայելով եղանակի ցուրտ լինելուն եւ անդադար փչող ուժգին քամուն, ժողովուրդը լցուել էր այնտեղ եւ տէրտէրները ձեռքից ձեռք էին խլում։

Տէր Բօրօլը, մի յաղթանդամ 65-ն անցրած քահանայ, չէր նմանում իւր կարգակիցներին, որոնք այդ օրն ամեն տեսակ միջոցների են դիմում, ինչքան կարելի է շատ գերեզման օրհնել ու շատ փող դրպտնել։ Նա միայն մէկ տիրացու էր բերել հետը, ուրիշ քահանաների պէս երկու երեք տղաներ չէր պահապան դրել հարուստների գերեզմանների մօտ, որ մեռելատէրերը գալուն պէս՝ վազեն իրան աչքով ունքով իմաց տան։ Բոլորովին զզուեցրել էր իրան, նորընծայ Տէր Թօթօլի արարմունքը։

Տէր Թօթօլն առհասարակ աղքատների գերեզմանները դժկամակութեամբ էր օրհնում, համարեա միշտ նշանակած կարգապաշտութիւնը կրճատում էր եւ յաճախ էլ կիսատ էր թողնում, եթէ վազվզող եկած տղան հասկացնում էր, թէ հարուստ մեռելատէր ծխականը սպասում է։

Այդպիսի տարբերութիւններ չէր անում Տէր-Բօրօլը։ Նա ամենեւին խտրութիւն չէր դնում հարուստ կամ աղքատ ննջեցեալի մէջ։ Հերթով գնում էր այնտեղ, ով առաջ էր հրաւիրում. եւ երբէք լսուած չէր, որ կրճատումներ անէ, կամ կիսատ թողնի գերեզմանօրհնէքի կարգապաշտութիւնը։

Ընդհանրապէս Տէր-Բօրօլը սկզբունքների տէր եւ կարգապահ մարդ էր։ Այսպէս չէր ուրիշների պէս, աջնախոհ ու տարբերի կեանք էր անցկացնում, շատախօս ու թեթեւօլիկ չէր, ծանրաբարոյ էր ու խորասուզուածն։ Թաղեցիք իրանց երեխաներին վախեցնում էին Տէր-Բօրօլով, իսկ եկեղեցու միւս քահանաները ու տիրացուները, նրա ներկայութեամբ միշտ կարգին ու համեստ էին պահում իրանց։ Վախենում էին բոլորը նրանից եւ մականունը դրել էին Տէր-Բօրօլ։

Եւ ահա Տէր-Բօրօլը, մեռելոցի ցուրտ ու քամի օրը, ծանր շուրջառն ուսին, խոշոր արծաթէ խաչը մի ձեռքին, իսկ միւսում արծաթապատ հաստ մաշտոցը, ստիպուած էր ընդարձակ գերեզմանատան մէկ ծայրից միւսն անցնել, ծառայելու իր ծուխերին։

Նա շտապում էր շուտ հասնել ամենքին էլ, ոչ թէ շուտ պրծնելու համար, այլ որպէսզի մի րոպէ առաջ կարողանար հովացնել մորմոքած սրտերը։

Կատարում էր Տէր-Բօրօլն իր հովուական պարտականութիւնը բոլոր եռանդով, չէր խնայում իրան, վազում էր երիտասարդի պէս։ Ցուրտն ու խառաշունչ քամին՝ նրա համար նշանակութիւն չունէին, նա տարուած իւր գործով տաքացել էր եւ քրտինքը խոշոր կաթիլներով գլորւում էր նրա լայն ճակատից փառաւոր թշերի ու սպիտակ մօրուքի վերայով։

Հակառակի պէս էլ ծխականներն այդ օրը կարծես խօսք էին արել և դեռ մի գերեզմանը չօրհնած, հրաւիրում էին մի ուրիշ տեղ։ Ժամանակ չէին տալիս խեղճին քըրտինքը սրբելու, կամ մի րոպէ դունչ հանգստանալու։

Եւ փաղում էր քրտնաթոր Տէր-Բօրօլը թռչում էր թմբից թումբ, հեւում ու շտապում, երբ նրա առաջք կտրեց մի գալիպէմ, փորը մէջքին կպած երիտասարդ։ Ցնցոտիները բզիկ բզիկ կախ էին ընկած նրա վրայով և պատառոտած հագուստի շատ տեղերից, երեւում էր նրա մերկ մարմինը։ Նա ձեռքը պարզեց և Տէր-Բօրօլից ողորմութիւն խնդրեց։

Տէր-Բօրօլը մի րոպէ կանգնեց, արդար բարկութիւնը բորբոքեց նրան, արիւնը խփեց գլուխը, աչքերն ու երեսը կարմրեցին։

Երիտասարդ, ջահէլ ու մուրացկանութիւն անե՞լ։

—Ձեռ ամաչում, այդ հասակում ողորմութիւն ես խնդրում։ Ձեռ կարող աշխատել, որ դատարկապորտի պէս ման ես գալիս և ուրիշներից, աշխատողներից ողորմութիւն խնդրում։ Ո՞վ է պարտական քեզ կերակրելու։ Ամէն մարդ պիտի աշխատի, որ իրաւունք ունենայ ապրելու։ Կորիր աչքից, փուչ, անպիտան, ձրիակեր։ Աստուածաշնչի խօսքը չես հասկացել, որ ասում է «Քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո»։

Երիտասարդը վերջին խօսքերը չհասկացաւ, բայց ընդունեց որ վատ բան էր լինելու։ Գլուխը քաշ հեռացաւ, գնաց կորաւ։

Տէր-Բօրօն էլ քրտինքը սրբեց մաշտոցին փաթաթած թաշկինակով ու գնաց աշխատելու։

ՄԻԼԻՕՆԵՐ

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Մեր սեփ. գործակալութիւնից

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Հայ ազգի պատգամաւոր ներկայացուցիչ պ. Յովհաննէս Սաղաթէլեանը չափից դուրս վրդովւած կովկասեան հայրենակիցների ձերբակալութիւնների, աքսորների և այլոց համար, պահանջեց խիստ պատասխանատուութեան ենթարկել մեղաւորներին և կեանքը իր նորմալ ընթացքի մէջ դնել։

Հոգեւոր գործոց նախարարը և մինիստր Գրեմիկէրը նոյն օրն եւեթ ընդունեցան պ. Սաղաթէլեանի մօտ ունկնդրութեան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Յովհաննէս Սաղաթէլեանը նկատի ունենալով իր բեղմնաւոր և արդիւնաշատ մասնակցութիւնը „Պետական Դումայում, թէ յօգուտ ընդհանուր հայրենիքի և թէ իրեն ընտրող հայութեան՝ ուզում է հրաժարուել Դումայի անդամութիւնից և յոյս ունի, որ հայ ազգը իրեն նման արժանաւոր մէկին կընտրէ այդ բարձր և պատուաւոր պաշտօնի համար։

ԷՋՄԻԱԾԻՆ.—Սուքիան Կոնսայեանը եղաւ տեսուչ Ճեմարանի։ Ինքն էլ, Տեղակալն էլ, աշակերտներն ու ծառաներն էլ զարմացան այդ անակնկալից։

—

ԹԻՖԼԻՍ.—Ալեքսանդր Բաղանթարը տեսնելով, որ երկու ամիս է անձրև չի գալիս և հենց որ ուզում է անձրևել, քամիները վեր են կենում ամպերը շաղ տալիս, այսօր վեր կացաւ փող տուսուեան և երկինք բարձրացաւ ամպերը կարկատելու և անձրև բերելու համար։

Խնդրում է մեր պուբլիցիստներին քիչ ստեր գրել, որպէսզի քամիք չվերկենան և կարկատած ամպերը նորից չը պատառոտեն։

ԹԻՖԼԻՍ.—Սամսոն Յարութիւնեանը և Բագրատ Նաւասարդեանը մենամարտի հրաւիրեցին իրարու։ Սպասում են լուրջ բարդութիւններ։

Կումիսի լճի վերայ երևացին արդէն թշնամի կողմերի նաւատորմերը։

## ՓՈՍՏ-ԱՐԿՂ

Շուշի (Ծովատեղ) Զոգրանեանին.—Ուսուցիչներին, վերջերս իրենց կոլլեգաները՝ դուք, դուրս էք բերում բացասական կողմերով։ Կարծում ենք, որ ամբողջութիւնը եղածի անձնաւորութիւնների համար չպիտի տուժէ։ Ուստի ձեր յօդուածները չեն տպւիլ։ «Տարաւբերում», «հարբած», «քէֆի համար խելագար, գործի համար վնասակար» և այլ բարեմասնութիւններով վարժապետներ անպայման քիչ ունենք, թէև համոզւած ենք, որ առանց այդ յատկութիւնների էլ չենք։ Այդպէս էլ պէտք է լինի եթէ վատը չլինի, լաւի ղադրը չենք իմանայ։

Բաքու. Վարդան Սուքիասեանին.—Գրում էք, «որ գրելով ձեր թերթին անդամ այս տարվայ 1909 թւից, իսկ այժմս էլ ցանկանում եմ մասնակցել ձեր թերթին Զոկերէն։ Ինու չէ, լաւ կանէք, քանի որ անդամ էք, իրաւունք ունէք և զոկերէն և մակերէն և էլ մլթոներէն հատուածներ ուղարկելու, իսկ եթէ անյարմար լինի, մենք էլ իրաւունք ունենք չը տպելու։

Через Օրդուբադ, Մեղրի Գ. Հայրապետեանին.—Կարգադրւած է։

Թաւրիզ. Սիմէօն Բաղէնին.—Ցայանեցէք Թահիմ խանին, որ խելքի գայ և ուրիշ անգամներ ոչինչ չպատասխանի։ Իր արգիտութեան վերագրելով, առաջին անգամ ներում ենք, երկրորդ անգամ յանդիմանում և երրորդ անգամն էլ հրաժարվում։ Որ №№ են պակաս գրեցէք։

Զարջոյ Կէծակին.—Ձեր երկար նամակը ստացանք. դէս արինք—դէն արինք, ոչինչ չիմացանք. միայն ստորագրութիւնից վեր այս տողերը տեսանք, հայս շատ բանըմ գիրելու. ի սէր Աստուծոյ, էդպէս բան չանէք, մենք ինչ մեղաւոր ենք, որ ուզում էք պատժել։ Դիտէ Աստուած, Զարջոյի խաղարներից մենք անտեղակ ենք, խընդրում ենք մեզ վրայ մեղք բարկանալ, այդպիսի նամակներ գրելով։


№ 4711 ՃԱՐՊՈՏ ՇՊԱՐ

Жирная пудра

սպիտակ, վարդագոյն և դեղին. Պատրաստուած է ամենամաքուր նիւթերից, որոնք կաշու համար վնասակար չեն, և մարթին կակղացնում ու քընքշացնում են։

ՖԵՐԴ. ՄԻՒԼՀԷՆՍ

Քէօլն Ռայնի վրայ և Րիգա, Նորին Կայսերական Մեծութեան գառն մատակարար.

Ферд. Мюльгенсъ

Кельнъ н|Рейнѣ. отд. въ Ригѣ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

АТРПЕТЪ

МАМЕДЪ-АЛИ ШАХЪ

Современная Персія

Александрополь тип. Ширакъ 1909

ПРОДАЕТСЯ: Въ Тифлисѣ книжная торговля Гуттенбергъ; Въ Александрополѣ Типографія Ширакъ

Միքայէլեանի փող., տուն Տէր-Յակոբեանի № 97

ՄԱՅԻՍԻ 17-ից ՄԻՆՉԵՒ ՅՈՒՆԻՍԻ 4-Ը

ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ

„ՄԵՂՈՒ“ ԸՆԿ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԱՆ

ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐՈՒՄ ՊԱՏՐԱՍՏՒԱԾ ԻՐԵՐԻ, ՆՈՅՆՊԷՍ ԵՒ ԿՈՂՄՆԱԿԻ ԽԵՂՃ ԿԱՆԱՆՑ ՁԵՌԱԳՈՐԾՆԵՐ.

Մանկական զգեստներ՝ չթի, բաւականի պիկէի, քաթանի, զգեստներ փոքրիկների և մեծերի համար. կանանց և տղամարդկանց չթեղ և պարզ սպիտակեղէն. կանանց բլուզկաներ, Matinées (տնային զգեստներ), ծաղիկներ և զանազան տեսակի իրեր։

Գները չափաւոր են։ Վաճառքը տեղի է ունենում ամէնայն օր, նոյնիսկ նաև կիրակի օրերը՝ առաւօտեան ժամը 9-ից մինչև երեկոյեան 10-ը։ Մուտքը ձրի է։



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

„ՊՐՕՎՕԴՆԻԿ"

ԱՐՏՕՆԻԱԾ

Ամենալաւը Աշխարհում



Ամենառաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յատկութեան, շքեղ ֆասոնների և ամենալաւ գործածուող նիւթերից

ԱՆՊԱՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆՕՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



ԿՐԿ ԽԱԿՕՇԻԿՆԵՐ

ՊՐՕՎՕԴՆԻԿ

ԱՐՏՕՆԻԱԾ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՄԻՒՆԽ ԵՒ ՎԷՅՍ

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒՈՒՄ

ПРОВОДНИКЪ РИГА

1888


---

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1909 թ. յունիսի 1-ից

„ՈՒՂԻ"

Քաղաքական, հասարակական և տնտեսական շաբաթաթերթի

Բաժանորդագինը. Քաղաքում մինչև տարվայ վերջը 2 ր., Քաղաքից դուրս՝ 2 ր. 50 կ., արտասահման՝ 3 ր., համարը 7կոպ.։

Հասցէն՝ Баку. Типографія Н. А. Эриванцова, Редакція „УГИ". Դրամ և տպագրած նամակներ ուղղել՝ Баку, уголъ Прачешной и Молоканск ул., домъ Кусиса, зубному врачу Мартиросу Каграманянцу.

---

Լոյս տեսաւ և վաճառւում է

ԲԱԽՇՕԻ

ԾԲԷ՞Ն ՉԻՐ ԿՈՒԹ՞Ն Է

Գինն է 5 կոպ.


ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ

Ի նկատի ունենալով, որ մինչև այժմ շարունակում են կեղծել մեր էտիկէտները, որպէսզի սպառեն իրենց ունի վատ ապրանքը, գործածելով արկղիկների և կապոցների միատեսակ ներկն ու մարկան, փոխանակ բոլորին յայտնի

ԲԱՐՁՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ՍԻՄՊԱՑԻԱ 10 ՀԱՏԸ

№ 8 10 ՀԱՏԸ

5 Կ.



Ինչպէս նաև մեր ֆիրմայի ուրիշ գլանակներ։ Մեր պ. պ. գնողներին խնդրում ենք ուշադրութիւն դարձնել ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՐԿԱՅԻՆ և ազգանունին

Ն. Ի. ԲՕԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴԻՔ




Скоропечатная „Дзмоба" Московская ул. № 5.



ԿԱԽԱՂԱՆՆԵՐ

— Հայրիկ, Աբդուլ-Համիդը կախաղաններ էր սարքում։

— Այո, սարքում էր և կախում։

— Մուհամէդ սուլթանն էլ կախում է. էհ, այսպէս էլ ինչ զանազանութիւն։

— Ա՜խ դու յիմարիկս, մեծ զանազանութիւն կայ. Համիդը կախում էր, որ արգելք լինի սահմանադրութեան, իսկ Մուհամէդը կախում է ՚ի պատիւ սահմանադրութեան։



ԹԱՏՐՈՆՈՒՄ

Ցուցարար. (խօսքեր տալով սիրողին).—Եւ նա պէտք է էկզալտացիայի ենթարկէ քո սրտիկը։

Սիրողը. (Ցուցարարին).—Ի սէր Աստուծոյ, ոչ մի խօսք էկզալտացիայի մասին։ Թատրոնում ոստի-կաններ կան, կարող ենք վտանգւել։




ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԱՌԱՋ

— Այսօր Օթելլօ են խաղում, գնանք թատրոն։

— Ի՞նչպէս կարելի է. ինչ կասեն մարդիկ, ես ցիլինդր եմ դրել, իսկ դու էլ նոր մօդնի շլեապա և հայոց թատրոն. դա իսկի չի սազում. ֆի՜... հայոց թատրոն։



ՔՆՆՈՒԹԻՒՆ

Ուսուցիչ.—Ինչ առարկաներ էք անցել։

Աշակերտ.—Շատ տեսակ։

Ուսուցիչ.—Իսկ ինչ գրքեր էք կարդացել

Աշակերտուհի. Սանդրն.—Պօլ-դէ-Կօկ, Նանա, Կաղ-մինի Թեւեր և Արեան Զայներ։

ԳԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ



Սաթթարն ու Մամէդ-Ալին ո՞վ կը յաղթէ

ԿԻԼԻԿԻԱՅԻ ԳԵՏԵՐՈՒՄ



«Գետը տանում է այն երեք հազար դիակները, որ լցված էին այնտեղ... Ես որոշում եմ 4-5 տարեկան մի աղջկայ դիակ. նոյնպէս և մի մարդու դիակ, որ անասունի պէս մորթված էր [illegible] ...ծիցը և այլ լրագիրներից.

Վիմագր. Գ. Դիւստերդիկի